ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Երկրար. և աշխարհագր. գիտ. XVI, № 3, 1963 Геологич. и географич. науки

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Հ. Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

BIBLIOGRAPHIE GEOGRAPHIQUE INTERNATIONALE. 1960.

Publiè sous les auspices de l'Union Géographique Internationale avec le concours de l'Organisation des Nations Unies pour l'éducation, la science et la culture (UNESCO). Paris, Centre National de la Recherche Scientifique, 1962. 865 p.

Մատենագիտական այս արժեքավոր հրատարակությունը ֆրանսիական աշխարհագրագետների ընկերակցության 66-րդ հատորն է՝ աշխարհագրության վերաբերյալ։ Գիրքը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ Ա. Ընդհանուր մաս և Բ. Ռեգիոնալ մաս։

Գրականության ցանկը ընթերցողին մատուցվում է որոշ դասավորվածությամբ։ Այսպես օրինակ, սկզբում զետեղված է «Մեթոդիկա և ուսուցում» գլուխը, այնուհետև «Աշխարհագրական գիտությունների պատմություն» բաժինը, որտեղ առանձին նշված են հին և միջին դարերի, 14—17-րդ դդ. մեծ հայտնագործությունների և 18—20-րդ դարերի մասին աշխատությունները։ «Աշխարհագրական հայտնագործությունների պատմություն» բաժնում ընդգրկված գրականության ցանկերը նույնպես տրված են այդպիսի բաժանումներով։ Գրքի պատմական հատվածը լրացվում է «Պատմական աշխարհագրություն» գլխով։

Գրքի առաջին մասում են զետեղված նաև «Մաթեմատիկական աշխարհագրություն և քարտեզագրություն», «Կազմաբանություն և հարակից գիտություններ», «Օդերևութաբանություն», «Հիդրոլոգիա», «Կենսաաշխարհագրություն», «Մարդկային աշխարհագրություն» բաժիններն իրենց ենթաբաժիններով։

Գրքի առաջին մասի վերջում տեղ են գտել 40-ից ավելի «Բիբլիոգրաֆիաներ, տարեգրքեր, բառարաններ, կոնգրեսների նյութեր և կենսագրություններ»։

Մատենագիտության ինչպես առաջին մասի, այնպես էլ երկրորդ մասի շատ աշխատությունների նկարագրություններից հետո տրված են կարճ անոտացիաներ կամ անվանի աշխարհագրագետների գնահատականները, որոնք օգնում են էլ ավելի բաղմակողմանի բնութագրելու տվյալ գիրքը կամ հոդվածը։ Մատենագիտությունն օգտագործողներին լայն տեղեկություններ տալու համար հաճախ հղումներ են արված նաև այլ բաժիններ՝ «տեսնել նաև...» նշումով։

Բիբլիոգրաֆիայում ընդգրկված է 1960 թ. բաղմաթիվ լեզուներով լույս տեսած աշխարհագրական գրականությունը՝ 6500-ից ավելի աշխատություններ։

Գրքի երկրորդ մասում (էջ 274—803) գրականության ընդարձակ ցանկեր կան աշխարհի հինգ երկրամասերի երկրների վերաբերյալ։

Այս հատորի բիբլիոգրաֆիական ցանկերի պատրաստման աշխատանքներին մասնակցել են տարբեր երկրների հարյուրից ավելի պրոֆեսորներ, ասիստենտներ, դոկտորներ և այլն։ ՍՍՌՄ-ի մասին բիբլիոգրաֆիան կազմել է Սորբոնի Համալսարանի պրոֆեսոր Պ. Ժորժը։ 230 անուն ծավալով բիբլիոգրաֆիական ցանկում տեղ են գտել ինչպես Սովետական Միության գիտնականների, այնպես էլ Փարիզում, Բեռլինում, Լոնդոնում, Պրագայում, Միլանում, Թորինոյում և այլ քաղաքներում լույս տեսած բազմաթիվ աշխատություններ Սովետական Միության ֆիզիկական աշխարհագրության, բնակչության, քաղաքների, տնտեսական աշխարհագրության վերաբերյալ և ռեգիոնալ ուսումնասիրություններ։

Մատենագիտությունն օժտված է մի քանի օժանդակ ցանկերով. գրքի վերջում կա նաև հիշատակված աշխատությունների հեղինակների այբբենական ցանկը (էջ 804—855)։